

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ

Կորպորատիվ Կառավարման Կենտրոն

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010,
Մովսես Խորենացու փողոց 15,
3-րդ հարկ, գրասենյակ 7/1
Հեռախոս: (374 10) 521-291, ֆաքս: (374 10) 547431



Ա	
Անկախություն	Անկախություն այլ անձանց ազդեցությունից: Հասկացությունը օգտագործվում է խորհրդի անդամների, արտաքին և ներքին աուդիտորների, խորհրդատուների, գնահատողների նկատմամբ:
Առևտրային գաղտնիք	Տեղեկատվության գաղտնիության կարգավիճակ (ռեժիմ), որը թույլ է տալիս այն տիրապետողին որոշակի կամ հնարավոր հանգամանքների դեպքում ավելացնել իր եկամուտները, կանխել չարդարացված ծախսերը, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայում պահպանել իր դիրքը կամ ստանալ այլ օգուտ (շահ):
Առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվություն	Ցանկացած բնույթի տեղեկություն (արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական և այլն), այդ թվում գիտատեխնիկական ոլորտում մտավոր գործունեության արդյունքներ, մասնագիտական գործունեության իրականացման միջոցներ, որոնք ունեն իրական կամ հնարավոր առևտրային արժեք երրորդ անձանց այն անհայտ լինելու ուժով, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և որի նկատմամբ այն տիրապետողը մտնում է առևտրային գաղտնիքի ռեժիմ:
Արդարություն	Կորպորատիվ կառավարման արժեքային հենասյուն, համաձայն որի կորպորատիվ կառավարման համակարգը պետք է պաշտպանի բաժնետերերի իրավունքները և ապահովի հավասար վերաբերմունք բոլոր բաժնետերերի, այդ թվում փոքր և օտարերկրացի բաժնետերերի նկատմամբ: Բոլոր բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան արդյունավետորեն վերականգնելու իրենց խախտված իրավունքները:
Արտաքին (ոչ գործադիր տնօրեն) տնօրեն (խորհրդի անդամ)	Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ չընդգրված խորհրդի անդամ:
Աուդիտ անկախ	Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության անկախ ստուգում:
Աուդիտոր	Աուդիտորական ծառայություններ իրականացնող անձ՝ անհատ աուդիտոր և (կամ) աուդիտ իրականացնող անձի (կազմակերպության) աշխատող:
Աուդիտորական եզրակացություն	Աուդիտ իրականացնող անձի կողմից կազմված և գաղտնիք չպարունակող փաստաթուղթ, որում արտահայտվում է կարծիք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:
Աուդիտորական	Աուդիտի ընթացքի, հայտնաբերված սխալների և թերությունների,



հաշվետվությունը (նամակ դեկավարությանը)	հաշվապահական հաշվառման վարմանն ու ֆինանսական հաշվետվությունների կազմմանը ներկայացվող պահանջների խախտումների, առանձին հարցերի գծով վերլուծության արդյունքների և պայմանագրով նախատեսված այլ հարցերի, ինչպես նաև սխալների և թերությունների վերացման ուղղությամբ առաջարկությունների մասին տեղեկություններ ներառող և առևտրային գաղտնիք պարունակող փաստաթուղթ:
Աուդիտ կամավոր	Ընկերության կամ իրավասու անձի նախաձեռնությամբ անցկացվող աուդիտ:
Աուդիտ պարտադիր	Օրենքով սահմանված դեպքերում անցկացվող աուդիտ:
Աուդիտ ներքին	Ընկերության աշխատակցի (աշխատակիցների) կողմից իրականացվող աուդիտ:
Աուդիտոր ներքին	<p>Ընկերության իրավասու մարմնի կողմից նշանակվող և վերջինիս հաշվետու աշխատակից, որի հիմնական գործառույթներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ⇒ ներքին հսկողության համակարգի համարժեքության և արդյունավետության գնահատումը, ⇒ ռիսկերի գնահատման և կառավարման ընթացակարգերի արդյունավետության ստուգումը ու գնահատումը, ⇒ կառավարման համակարգի և ֆինանսական տեղեկատվության, հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների ճշգրտության և արժանահավատության, ակտիվների պահպանվածության ստուգումը, ⇒ ընկերության գործառնությունների արդյունավետության և տնտեսական նպատակահարմարության գնահատումը, ⇒ իրավական և օրենսդրական պահանջների, ինչպես նաև վարքագծի կանոնների կիրառումն ապահովող կառուցակարգերի ստուգումը և գնահատումը:
Աուդիտի հանձնաժողով	Ընկերության տնօրենների խորհրդին կից գործող հանձնաժողով, որի հիմնական գործառույթներն են աուդիտի քաղաքականության և ընթացակարգերի, ներքին և արտաքին աուդիտորների թեկնածությունների, դրանց վարձատրության չափի, աուդիտի ոլորտների և հաճախականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, աուդիտի հաշվետվությունների, ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների պլանների դիտարկումը, դրանց իրագործմանը հետևումը և այլն:
Աուդիտ ֆինանսական	Աուդիտ, որի նպատակն է գնահատել Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգի հուսալիությունը, ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ու ամբողջականությունը:



Աուդիտ գործառնական	Աուդիտ, որի նպատակն է վերլուծել Ընկերության կազմակերպչական կառուցվածքը և գնահատել վերջինիս ամբողջականությունն ու արդյունավետությունը Ընկերության առջև դրված նպատակների իրագործման տեսանկյունից:
Աուդիտ կառավարչական	Աուդիտ, որի նպատակն է Ընկերության կառավարման և վերահսկման գործում գնահատել մենեջմենթի գործունեության որակը:
Աուդիտ համապատասխանության	Աուդիտ, որի նպատակն է գնահատել Ընկերությունում օրենքների, իրավական ակտերի (ներքին և արտաքին), մեթոդների և ընթացակարգերի իրագործելիության որակն ու համապատասխանության աստիճանը:
Բ	
Բաժնետեր մաժորիտար	Ընկերության բաժնետոմսերի սեփականատեր, որը Ընկերության կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով հսկում է Ընկերությանը և հնարավորություն ունի կանխորոշել Ընկերության որոշումները:
Բաժնետեր մինորիտար	Մաժորիտար բաժնետիրոջ կողմից հսկվող Ընկերության բաժնետոմսերի մինորիտար փաթեթի (սովորաբար 5%-ից փոքր) սեփականատեր:
Բաժնետերերի ընդհանուր ժողով	Բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմին, որի միջոցով բաժնետերերն իրագործում են Ընկերության կառավարմանը մասնակցելու իրենց իրավունքը:
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով	Տարեկան ընդհանուր ժողովներից բացի գումարվող ժողովներ: Արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են ընդհանուր ժողովի իրավասության շրջանակում գտնվող անհետաձգելի հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով	Ընկերության գործունեության տարեկան արդյունքներն ամփոփող ընդհանուր ժողով: Տարեկան ընդհանուր ժողովի գումարման ժամկետները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ, սակայն պետք է լինեն ոչ ուշ, քան հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
Բաժնետերերի համաձայնագիր	Բաժնետերերի միջև կնքվող համաձայնագիր՝ որպես նրանց շահերի համաձայնեցման կառուցակարգ:
Բաժնետոմսերի բաժանում	Ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսի փոխարկում նույն տեսակի երկու կամ ավելի բաժնետոմսերի:
Բաժնետոմսերի համախմբում	Ընկերության երկու կամ ավելի տեղաբաշխված բաժնետոմսերի



	փոխարկում նույն տեսակի մեկ նոր բաժնետոմսի:
Բաժնետոմսեր հայտարարված	Բաժնետոմսերի առավելագույն քանակ, որի սահմաններում Ընկերությունը կարող է տեղաբաշխել լրացուցիչ բաժնետոմսեր:
Բարելիդ՞ բացահայտում	<p>Տեղեկատվության բացահայտում, որը բավարարում է հետևյալ պայմաններին՝</p> <ul style="list-style-type: none"> ⇒ իրականացվում է կանոնավոր հիմունքներով, ժամանակին և օպերատիվ, ⇒ ապահովում է համապատասխան տեղեկատվության անխափան հասանելիություն, ⇒ բացահայտվող տեղեկատվությունն էական է, ամբողջական, օբյեկտիվ, արժանահավատ, ոչ հակասական, ստույգ, էական բացթողումներից զերծ, ⇒ շահառու անձանց նկատմամբ կիրառվում է հավասար վերաբերմունք, ⇒ ընկերության թափանցիկության և նրա առևտրային շահերի միջև սահմանվում է խելամիտ հավասարակշռություն, ⇒ ապահովվում է տարբեր կապուղիներով բացահայտվող տեղեկատվության նույնականությունը:
Գ	
Գործադիր մարմին	Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող մարմին: Միանձնյա գործադիր մարմին՝ տնօրեն և կոլեգիալ գործադիր մարմին՝ տնօրինություն (վարչություն):
Գործակալական հարաբերություններ	Հարաբերություններ, որոնք ծագում են գործակալի (մենեջերի) և պրինցիպալի (սեփականատիրոջ) միջև, երբ պրինցիպալը գործակալին պատվիրակում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Գործակալն իրականացնում է ձեռնարկատիրական գործառույթներ, իսկ պրինցիպալը հանդես է գալիս որպես կապիտալի մատակարար:
Գործակալական հակամարտություն	Գործակալի և պրինցիպալի շահերի անհամապատասխանություն, որը հետևանք են տեղեկատվական ասիմետրիայի և ոչ ամբողջական պայմանագրերի: Գործակալն ընկալելով իր գործունեության արդյունքների գնահատման դժվարությունները՝ պրինցիպալին տրամադրում է ընտրանքային տեղեկատվություն և ամբողջությամբ չի կատարում իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունները: Նման իրավիճակների արդյունքում աճում են գործակալական ծախսերը:
Գործակալական ծախսեր	Գործակալական հակամարտություններով պայմանավորված ծախսեր, այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> ⇒ Պրինցիպալի ծախսեր, որոնք պայմանավորվում են



	<p>գործակալի գործունեության մոնիթորինգով,</p> <p>⇒ Գործակալի ծախսեր, որոնք երաշխավորում են պրինցիպալի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարումը,</p> <p>⇒ Մնացորդային ծախսեր, որոնք ծագում են, երբ պրինցիպալը սահմանափակում է որոշակի հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու գործակալի իրավասությունները:</p>
Գումարային քվեարկություն	Քվեարկության եղանակ, որը կիրառվում է խորհրդի անդամների ընտրության ժամանակ, և որի դեպքում ձայնի իրավունք ունեցող բաժնետիրոջ ձայնը հաշվարկվում է որպես սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսերի և խորհրդի անդամների թեկնածուների թվի արտադրյալ: Բաժնետերն իր գումարային ձայնը կարող է իր հայեցողությամբ բաժանել խորհրդի անդամների թեկնածուների միջև կամ տալ կոնկրետ թեկնածուի:
Դ	
Դիտորդ խորհուրդ	Խորհրդի երկպալատանի համակարգի կառավարման մարմին, որն ապահովում է Ընկերության ռազմավարական կառավարումն ու գործունեության վերահսկումը:
Է	
Էական տեղեկատվություն	Տեղեկատվություն, որի հրապարակումը կամ խեղաթյուրումը կարող է ազդել նրա օգտագործողների կողմից կայացվող որոշումների վրա: Էականությունը իրադարձության կամ տեղեկատվության բնութագրիչն է, որը բնութագրում է տեղեկատվության կամ իրադարձության կարևորությունը և դրա ազդեցությունը Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքի վրա:
Էական փաստերի բացահայտում	Ընկերության կողմից էական նշանակություն ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվության բացահայտում:
Ը	
Ընդհանուր ժողովի այլընտրանքային իրավասություն	Ընդհանուր ժողովի իրավասություն հանդիսացող այնպիսի հարց, որի վերաբերյալ որոշումների կայացումը Ընկերության կանոնադրությամբ կարող է փոխանցվել խորհրդին:
Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն	Ընդհանուր ժողովի իրավասություն հանդիսացող այնպիսի հարց, որը չի կարող փոխանցվել կառավարման այլ մարմնի՝ որոշում կայացնելու նպատակով:
Ընդհանուր ժողով համատեղ ներկայությամբ	Ընդհանուր ժողով, որի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ որոշումները կայացվում են Ընկերության



	բաժնետերերի համատեղ ներկայությամբ:
Ընդհանուր ժողով հեռակա	Ընդհանուր ժողով, որի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ որոշումները կայացվում են հեռակա քվեարկության (հարցման) միջոցով՝ քվեաթերթիկների օգտագործմամբ:
Ընդհանուր ժողովի քվորում	Ընդհանուր ժողովի իրավասու լինել, երբ ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերը:
Թ	
Թափանցիկություն	Կորպորատիվ կառավարման արժեքային հենասյուն, համաձայն որի կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ապահովի բոլոր այն էական փաստերի ժամանակին և ճշգրիտ բացահայտումը, որոնք վերաբերում են Ընկերությանը, ներառյալ նրա ֆինանսական վիճակին, գործունեության արդյունքներին, սեփականության կառուցվածքին, կառավարման համակարգին:
Լ	
Լիազորագիր	Փաստաթուղթ, որի միջոցով բաժնետերը նշանակում է լիազոր ներկայացուցիչ, և նրա միջոցով իրականացնում արժեթղթի նկատմամբ ու արժեթղթով ամրագրվող իր իրավունքները:
Լիազորագրով քվեարկություն	Քվեարկության ընթացակարգ, որի դեպքում բաժնետերն իր ձայնի իրավունքը լիազորագրով փոխանցում է մեկ այլ անձի և անձնապես չի մասնակցում ընդհանուր ժողովին:
Խ	
Խոշոր գործարք	Արտակարգ բնույթի գործարք (փոխկապակցված գործարքներ), որը (որոնք) կապված է (են) Ընկերության կողմից ակտիվների ձեռքբերման/օտարման հետ, որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ սովորաբար գերազանցում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 20 և ավելի տոկոսը:
Ծ	
Ծանուցում	Կորպորատիվ կառավարման որևէ գործողության կամ դրա կատարման մտադրության վերաբերյալ պաշտոնական տեղեկացում:
Կ	
Կառավարման մարմին	Ընկերության կորպորատիվ ներքին կառուցվածքի տարր, որն



	<p>օժտված է կորպորատիվ իրավունակությամբ, իրագործում է իրեն հատուկ գործառույթներ և հանդես է գալիս Ընկերության անունից:</p>
<p>Կառավարող կազմակերպություն (կառավարիչ)</p>	<p>Առևտրային կազմակերպություն (անհատ ձեռնարկատեր), որին պայմանագրով պատվիրակվել են Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները:</p>
<p>Կորպորատիվ կառավարում</p>	<p>Կառուցակարգեր, որոնց օգնությամբ իրականացվում է Ընկերության կառավարումը և նրա գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ինչը ենթադրում է հարաբերությունների համակարգի ձևավորում Ընկերության գործադիր մարմնի, խորհրդի, բաժնետերերի և այլ շահառուների միջև:</p>
<p>Կորպորատիվ կառավարում նեղ իմաստով</p>	<p>Գործընթաց, որի միջոցով ներկայացվում և սպասարկվում են ներդրողների շահերը:</p>
<p>Կորպորատիվ կառավարում լայն իմաստով</p>	<p>Գործընթաց, որի միջոցով հավասարակշռվում են Ընկերության տնտեսական, սոցիալական և բնապահպանական նպատակները, ինչպես նաև անհատական և ընդհանրական շահերը:</p>
<p>Կորպորատիվ կառավարման պատշաճ պրակտիկա</p>	<p>Կորպորատիվ կառավարման պրակտիկա, որը ենթադրում է կորպորատիվ հակակշիռների առկայություն, Ընկերության թափանցիկության ապահովում, նրա գործունեության մասին ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության բացահայտում, ներքին հսկողության համակարգի ու ընթացակարգերի առկայություն, հաշվետվողականության և պատասխանատվության հստակ սահմանագծված շրջանակներ, բաժնետերերի և այլ շահառուների իրավունքների պաշտպանություն ու դրանց իրագործման ապահովում, անկախ տնօրենների առկայություն, Ընկերության ռազմավարության սահմանում և այլն:</p>
<p>Կորպորատիվ էական իրադարձություն</p>	<p>Իրադարձություն, որը կարող է հանգեցնել Ընկերության կառուցվածքային և ֆինանսական դրության հետ առնչվող կորպորատիվ էական փոփոխությունների: Կորպորատիվ էական իրադարձությունների թվին դասվում են Ընկերության վերակազմակերպումը, խոշոր, շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը և իրագործումը, կանոնադրության փոփոխությունների և լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը, արժեթղթերի թողարկումը և այլն:</p>
<p>Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն</p>	<p>Ընկերության կամավոր և օրենքի նվազագույն պահանջները գերազանցող ներդրում սոցիալական, տնտեսական և բնապահպանական ոլորտներում, որոնք անմիջականորեն առնչվում են Ընկերության բիզնես ռազմավարության հետ:</p>
<p>Կորպորատիվ վարքագծային կանոններ</p>	<p>Կորպորատիվ մշակույթի նորմատիվ փաստաթուղթ: Կորպորատիվ վարվելակերպի հիմնարար ուղեցույց, որում ամրագրվում են</p>



	Ընկերության բաժնետերերի, տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի անդամների ու աշխատակիցների բարոյական պարտավորությունները միմյանց և այլ շահառուների նկատմամբ:
Կորպորատիվ կառավարման կանոնագիրք	Սկզբունքների, կանոնների ժողովածու, որոնք հանդիսանում են կորպորատիվ վարքագիծ սահմանող նորմեր և կոչված են կանոնակարգել ու կարգավորել կորպորատիվ կառավարման առնչությամբ ծագող հարաբերություններն ու խթանել ֆորմալ կանոնների բարելավումը:
Կորպորատիվ կոնֆլիկտ	Տարածայնություն, որը կարող է ծագել կամ ծագում է ներկորպորատիվ, բաժնետերերի միջև, Ընկերություն-շահառուներ հարաբերություններում:
Կորպորատիվ մշակույթ	Ընկերության հիմնարար արժեքներ, նորմեր, սկզբունքներ, որոնք որոշում են Ընկերության և նրա աշխատակիցների վարքագիծը:
Կորպորատիվ քարտուղար	Պաշտոնատար անձ, ով իրականացնում է տնօրենների խորհրդի գործունեության կազմակերպական, տեղեկատվական և փաստաթղթային ապահովումը, մասնակցում է Ընկերության կորպորատիվ կառավարման քաղաքականությունների մշակմանը, հետևում է դրանց պահպանմանը և կատարելագործմանը, ապահովում է Ընկերության գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը և Ընկերության ներքին իրավական ակտերին:
Կորպորատիվ նորմեր	Ընկերությունում ձևավորվող տիպային իրավիճակները (հարաբերությունները) կարգավորող նորմեր:
<	
Հաշվետվողականություն	Կորպորատիվ կառավարման արժեքային հենասյուն, համաձայն որի կորպորատիվ կառավարման համակարգը պետք է լինի ռազմավարական ուղեցույց՝ խորհրդի կողմից Ընկերության կառավարման, գործադիր մարմնի գործունեության արդյունավետ վերահսկման, ինչպես նաև Ընկերության և նրա բաժնետերերի առջև խորհրդի հաշվետվողականության ապահովման համար:
Հաշվեկշռային արժեք	Ընկերության կամ որևիցե այլ ակտիվի արժեք՝ արտացոլված Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերում:
Հաշվիչ հանձնաժողով	Ընկերության կողմից ձևավորվող հանձնաժողով, որը որոշում է ընդհանուր ժողովի քվորումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ է տալիս ընդհանուր ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ, ապահովում է քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության



	արդյունքները, դրանց վերաբերյալ կազմում արձանագրություն:
Հեռակա քվեարկություն	Առանց համատեղ ներկայության քվեարկություն, որն իրականացվում է քվեաթերթիկների օգտագործմամբ:
Հոլդինգային ընկերություն	Ընկերություն, որի ակտիվները ներառում են այլ ընկերությունների կամ ընկերությունների խմբի բաժնետոմսերի հսկիչ փաթեթները:
Ձ	
Ձայնի իրավունք	Ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունք:
Ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր (քվեարկող բաժնետոմսեր)	Լրիվ վճարված և շրջանառության մեջ գտնվող հասարակ և/կամ արտոնյալ բաժնետոմսեր, որոնք իրենց սեփականատերերին տալիս են ձայնի իրավունք ընդհանուր ժողովում քվեարկության դրված հարցերի վերաբերյալ:
Ձայների որակյալ մեծամասնություն	Կորպորատիվ որոշումների կայացման համար ձայների անհրաժեշտ քանակ (սովորաբար ձայների 2/3 կամ 3/4 մեծամասնություն):
Ձայների պարզ մեծամասնություն	Կորպորատիվ որոշումների կայացման համար ձայների անհրաժեշտ քանակ (սովորաբար ձայների 1/2 մեծամասնություն):
Մ	
Մեղիացիա	Բանակցություններ երրորդ, չեզոք կողմի մասնակցությամբ, որը շահագրգռված է կոնֆլիկտի մասնակից կողմերի համար դրա առավելագույնս արդյունավետ լուծման գործում:
Ն	
Նախապատվության իրավունք	Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի և դրանց փոխարկվող արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ բաժնետիրոջ բաժնեմասնակցությանը համամասնորեն, առաջնահերթ կարգով ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի և դրանց փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման իրավունք:
Ներքին իրավական ակտեր	Ընկերության, նրա առանձնացված ստորաբաժանումների իրենց իրավասության շրջանակում ընդունած ակտ, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար և սահմանում է վարքագծի կանոններ:
Ներքին (գործադիր) տնօրեն (խորհրդի անդամ)	Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ ներգրավված խորհրդի անդամ:
Ներքին հսկողության համակարգ	Ընթացակարգերի, մեթոդների և կառուցակարգերի ամբողջություն, որն ապահովում է Ընկերության տնտեսական



	խնդիրների իրագործումը, Ընկերության կողմից իրավական պահանջներին հետևելը, ակտիվների պաշտպանվածությունը, անհամապատասխանությունների, խախտումների և ռիսկերի բացահայտումը, բացահայտվող տեղեկատվության արժանահավատությունը, ամբողջականությունը, ճշգրտությունը, ժամանակին և արժանահավատ ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների մշակումն ու հրապարակումը:
Նշանակալից մասնակցություն	Ընկերության կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոսային բաժնեմասնակցություն:
Նշանակված տնօրեն (խորհրդի անդամ)	Բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից նշանակված խորհրդի անդամ, որը ներկայացնում է տվյալ բաժնետիրոջը (բաժնետերերին) խորհրդում, սակայն պարտավոր է գործել ի շահ Ընկերության, այլ ոչ թե առանձին անձի:
Շ	
Շահառու անձ	Անձ, ում վրա Ընկերության գործունեությունն ունի էական ազդեցություն, և ում գործողությունները կարող են էականորեն ազդել Ընկերության կողմից իր նպատակներին հասնելու կարողության վրա (բաժնետեր, աշխատակից, հաճախորդ, մատակարար, գործընկեր, տեղական համայնք, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն):
Շահագրգիռ անձ	<ul style="list-style-type: none"> ⇒ Ընկերության ղեկավար և նրա հետ փոխկապակցված անձ, այդ թվում՝ ընտանիքի անդամ, ⇒ Ընկերության կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և նրա հետ փոխկապակցված անձ, այդ թվում՝ ընտանիքի անդամ, ⇒ Ընկերության հետ փոխկապակցված անձ:
Շահագրգռվածության առկայությամբ գործարք	Շահագրգիռ անձանց միջև ռեսուրսների, ծառայությունների կամ պարտականությունների փոխանցման գործարք՝ անկախ վճարի գանձումից:
Շահերի բախում	Իրավիճակ, երբ անձն ունի անձնական ուղղակի նյութական (անուղղակի նյութական) շահ, որը հակասում է Ընկերության շահերին և/կամ խանգարում է Ընկերությանն իրականացնել իր պարտավորությունները շահառուների նկատմամբ:
Շուկայական արժեք	Գին, որը պատրաստ է վճարել տեղեկացված գնորդը, իսկ տեղեկացված վաճառողը պատրաստ է ստանալ այն պայմանով, որ գործարքն իրագործվում է խելամիտ ժամկետներում:
Շահութաբաժին	Ընկերության բաժնետերերի միջև բաշխման ենթակա զուտ շահույթ:



Շահութաբաժին կումուլատիվ	Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ կամ մասնակի չվճարված շահութաբաժինների կուտակման և դրանց վճարման հնարավորություն հետազայում:
Շահութաբաժին մասնակցության	Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար շահութաբաժիններ տրամադրելու հնարավորություն:
Շահութաբաժին տարեկան	Տարեկան ընդհանուր ժողովի որոշման հիման վրա հաշվետու տարվա արդյունքներով վճարվող շահութաբաժին:
Շահութաբաժին միջանկյալ	Տնօրենների խորհրդի որոշման հիման վրա եռամսյակային և կիսամյակային կտրվածքով վճարվող շահութաբաժին:
Շահութաբաժնային քաղաքականություն	Բաժնետերերին շահութաբաժինների վճարման քաղաքականություն, որի ընտրությամբ նախատեսվում է լուծել բաժնետերերի բարեկեցության մակարդակի բարձրացման, ընկերության գործունեության բավարար ֆինանսավորման հիմնախնդիրները:
Ո	
«Ոսկե բաժնետոմս»	Բաժնեմասնակցությամբ պայմանավորված Ընկերության կառավարմանը մասնակցության հատուկ իրավունք, որը հնարավորություն է տալիս արգելափակել որոշակի կորպորատիվ որոշումների կայացումը:
Պ	
Պահուստային հիմնադրամ	Ընկերության սեփական կապիտալի մաս, որը կարող է օգտագործվել Ընկերության վնասների ծածկման, բաժնետոմսերի և պարտատոմսերի հետգնման համար:
Պատասխանատվություն	Կորպորատիվ կառավարման արժեքային հենասյուն, համաձայն որի կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ճանաչի շահառու անձանց օրենքով սահմանված իրավունքները և խրախուսի ընկերությունների և շահառուների ակտիվ համագործակցությունը ուղղված հասարակության բարեկեցության աճին, աշխատատեղերի ստեղծմանը և ընկերությունների ֆինանսական կայունությանը:
Ռ	
Ռեեստրի փակման ամսաթիվ	Ընկերության կողմից սահմանվող ամսաթիվ, որի դրությամբ բաժնետոմսերի սեփականատերի ցուցակում ընդգրկված անձն իրավունք ունի իրականացնել բաժնետոմսով ամրագրվող իր իրավունքները:



Ռիսկ	Հավանական իրադարձություն, որը կարող է ազդել Ընկերության ռազմավարական և գործառնական նպատակների իրականացման վրա:
Ռիսկ-ախորժակ (Ռիսկ-հանդուրժողականություն)	Ընկերության համար ընդունելի ռիսկերի սահմանաչափ:
Ռիսկի աղբյուր (գործոն)	Ռիսկային իրավիճակի ծագման հնարավորություն կրող հանգամանք, իրավիճակ, իրադարձություն:
Ռիսկերի կառավարում	Ընկերության խորհրդի, գործադիր մարմնի և աշխատակիցների կողմից իրականացվող գործընթաց, որն ուղղված է Ընկերության կողմից իր նպատակներին հասնելու կարողության վրա հավանական ազդեցություն ունեցող իրադարձությունների բացահայտմանը, կառավարմանն ու վերահսկմանը և ներառում է հետևյալ գործընթացները՝ ռիսկերի նույնականացում (ճանաչում), չափում, գնահատում, ռիսկերի դասակարգում, ռիսկ-ախորժակի սահմաններում ռիսկի ստանձնում և դրա վրա ներգործում, ռիսկերի նկատմամբ մոնիթորինգի սահմանում:
Ռիսկերի կառավարման համակարգ	Ընկերության ռիսկերի կառավարման նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործընթացների, մեթոդների, տեղեկատվական համակարգերի ամբողջություն:
Ռիսկերի կառավարման հանձնաժողով	Ընկերության տնօրենների խորհրդին կից գործող հանձնաժողով, որի հիմնական գործառնություններն է խորհրդին՝ Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության, ռազմավարության և դրանց իրագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը:
Ռիսկի հետևանք	Ռիսկի իրացման արդյունքում ծագող առավել հավանական իրադարձություն, որը կարող է ազդել Ընկերության կողմից իր խնդիրների իրականացման արդյունավետության և ժամկետների, ֆինանսական արդյունքների, ծառայությունների հուսալի մատուցման, մարդկային ռեսուրսների կառավարման, Ընկերության ռազմավարական և գործառնական նպատակների իրականացման գործընթացների վրա:
Ս	
Սեփականության տարալուծում	Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կամ բաժնետոմսերի փոխարկող արժեթղթերի փոխարկման միջոցով Ընկերության կապիտալում բաժնետերերի տեսակարար կշռի նվազեցում:
Սեփականության կառուցվածք	Ընկերության բաժնետերերի միջև բաժնետոմսերի բաշխվածություն:
Ստանդարտ քվեարկություն	Բաժնետերերի քվեարկության եղանակ, որի դեպքում գործում է «մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքը:



Սոցիալական ներդրումներ	Ֆինանսական աջակցության տարատեսակ, որն իրականացվում է Ընկերության կողմից՝ հասարակության խոցելի խմբերի կենսամակարդակը բարձրացնելու նպատակով:
Վ	
Վենչուրային կապիտալ	Մասնավոր բաժնեմասնակցային ներդրումների տարատեսակ, որը կատարվում է որոշակի ձեռնարկության (բիզնեսի) կայացմանն օժանդակելու նպատակով: Այն միտված է դեպի գիտատեխնիկական նորությունների կիրառման ոլորտ, որը ենթադրում է բարձր ռիսկայնություն և ակնկալում է գեր բարձր շահութաբերություն:
Վերստուգող հանձնաժողով (վերստուգող)	Ընկերության ընդհանուր ժողովի կողմից ընտրվող վերստուգող մարմին, որի հիմնական գործառույթն է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը:
Տ	
Տարեկան հաշվետվություն	Տարեկան կտրվածքով Ընկերության բաժնետերերի և այլ շահառուների համար բացահայտվող փաստաթուղթ, որը սովորաբար բովանդակում է Ընկերության գործունեության նպատակների, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների, հիմնական ռիսկերի, շահագրգռվածության առկայությամբ գործարքների, բարձրագույն ղեկավարության և խորհրդի անդամների կենսագրական տվյալների, նրանց վարձատրության քաղաքականության հիմնական սկզբունքների, կորպորատիվ կառավարման կառուցվածքի ու կորպորատիվ քաղաքականությունների, արտաքին աուդիտորի, կորպորատիվ կառավարման էական իրադարձությունների, ընկերության զարգացման հեռանկարների մասին տեղեկատվություն:
Տնօրենների խորհուրդ (խորհուրդ)	Ընկերության կառավարման մարմին, որը բաժնետերերի անունից պատասխանատու է Ընկերության ռազմավարական կառավարման և գործադիր մարմնի գործունեության վերահսկման համար:
Տնօրենների խորհրդի անդամ	Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրված անձ, որն իրականացնում է ընկերության ռազմավարական կառավարումն ու գործադիր մարմնի գործունեության վերահսկումը բաժնետերերի անունից:
Տնօրենների խորհրդի անկախ անդամ	Խորհրդի անդամ, ով. ⇒ վերջին 3 տարվա ընթացքում Ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել Ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ ընկերությունում (ընկերություններում), բացառությամբ



	<p>խորհրդի անդամ պաշտոնավարելուց,</p> <ul style="list-style-type: none"> ⇒ փոխկապակցված չէ Ընկերության նշանակալից հաճախորդի և/կամ մատակարարի կամ դրանց հետ փոխկապակցված անձանց հետ, ⇒ չունի ծառայությունների մատուցման պայմանագրեր Ընկերության կամ նրա փոխկապակցված անձանց հետ, ⇒ ներգրավված չէ որևիցե ընկերության գործադիր մարմնի կազմում, որտեղ տնօրենների խորհրդի անդամ է (են) հանդիսանում Ընկերության գործադիր մարմնի անդամը (անդամները), ⇒ վերջին 3 տարվա ընթացքում Ընկերությունից կամ Ընկերության հետ փոխկապակցված անձանցից ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրությունից, ⇒ վերջին 3 տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի ղեկավար կամ հաշվապահ, չի ունեցել նյութական բնույթի որևէ գործարար հարաբերություն Ընկերության կամ Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ, ⇒ վերջին 5 տարվա ընթացքում չի հանդիսացել Ընկերության գործող կամ նախկին արտաքին աուդիտոր իրականացնող անձի, նրա հետ փոխկապակցված ընկերությունների բաժնետեր կամ աշխատող, ⇒ վերջին 10 տարվա ընթացքում 4 տարուց ավելի չի հանդիսացել Ընկերության խորհրդի անդամ, ⇒ չի հանդիսանում Ընկերության նշանակալից բաժնետեր:
<p>Տնօրենների խորհրդին կից գործող հանձնաժողովներ</p>	<p>Ընկերության տնօրենների խորհրդին կից գործող խորհրդակցական ծայն ունեցող մարմին, որի հիմնական առաքելությունն է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից կայացվող որոշումների որակի բարելավումը և Ընկերության բաժնետերերի ու այլ շահառուների շահերի պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքների ապահովումը:</p>
<p>Տնօրենների խորհուրդ «արարողակարգային»</p>	<p>Խորհուրդ, որ իր գործառույթներն իրականացնում է ֆորմալ ձևով և աննշան ազդեցություն ունի Ընկերության գործունեության վրա:</p>
<p>Տնօրենների խորհուրդ «լիբերալ»</p>	<p>Խորհուրդ, որի վերահսկման լծակները թույլ են:</p>
<p>Տնօրենների խորհուրդ «լիդեր»</p>	<p>Խորհուրդ, որի անդամները գործում են որպես մեկ ամբողջություն և իրականացնում են Ընկերության ռազմավարական կառավարումը:</p>



Տնօրենների խորհուրդ ունիտար	Խորհուրդ, որը բնութագրական է կորպորատիվ կառավարման ամերիկյան տիպարին, և որում գործադիր և ոչ գործադիր տնօրեններին վերապահվում են համարժեք գործառույթներ:
Տնօրենների խորհուրդ երկապատանի	Խորհուրդ, որը բնութագրական է կորպորատիվ կառավարման գերմանական տիպարին և ներկայացվում է գործադիր կոլեգիալ մարմնի և դիտորդ խորհրդի միջոցով:
Փ	
Փոխկապակցված անձինք	<p>Անձինք հանդիսանում են փոխկապակցված, եթե</p> <ul style="list-style-type: none"> ⇒ նրանցից մեկը մյուսի դուստրն է. ⇒ նրանցից մեկի ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին տնօրինող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերերը տնօրինում են մյուս անձի ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին կամ ունեն օրենքով չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն. ⇒ նրանցից մեկի խորհրդի անդամների, տնօրենների կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց մեծամասնությունը հանդիսանում են մյուս անձի խորհրդի անդամներ, տնօրեններ կամ նման պարտականություններ կատարող այլ անձինք. ⇒ ֆիզիկական անձանց դեպքում միևնույն ընտանիքի անդամ են կամ վարում են ընդհանուր տնտեսություն:
Փոխկապակցված անձանց ռեեստր	Փոխկապակցված անձանց ցուցակ, որը վարվում և պահպանվում է Ընկերության կողմից:
Փոխհատուցումների/ վարձատրության հանձնաժողով	Ընկերության տնօրենների խորհրդին կից գործող հանձնաժողով, որի հիմնական գործառույթներն են գործադիր մարմնի և առանցքային նշանակություն ունեցող անձնակազմի գնահատման կառուցակարգերի, վարձատրության քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, դրանց իրագործմանը հետևումը և այլն:
Բ	
Քվեաթերթիկ	Բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի քվեարկության համար օգտագործվող փաստաթուղթ:
Ֆ	
Ֆիդուցիար պարտականություն	Ընկերության և նրա բաժնետերերի նկատմամբ այլ անձի լավագույն շահերից գործելու պարտականություն:



Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտներ	Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից ընդունված ֆինանսական հաշվետվությունների կազմման ստանդարտներ:
--	--